ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2013թ. **N__-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 580-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Բրյուսովի փողոցի հ.23 շենքի հ.1/1՝ 13,42 մակերեսով բնակելի շինությունը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 01.07.2013թ. հ.01072013-01-0217 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Արա Օհանյանին և Դրաստամատ Օհանյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արա և Դրաստամատ Օհանյանները դիմել են Երևանի քաղաքապետարան Կենտրոն վարչական շրջանի Բրյուսովի փողոցի հ.23 շենքի հ.1/1՝ 13.42քմ. բնակելի շինությունը իրենց անվամբ մասնավորեցնելու խնդրանքով։

Արա և Դրաստամատ Օհանյանները ընտանիքի այլ անդամների հետ փաստացի բնակվում են Բրյուսովի փողոցի հ.23 շենքի հ.1՝ 68.7 ընդհանուր մակերեսով 2-րդ հարկի երկու սենյականոց բնակարանում, որը սեփականության իրավունքով պատկանում է Արա և Դրաստամատ Օհանյաններին (հիմք անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 23.05.2007թ. հ.2236141 վկայական)։

Բնակարանի մի հատվածը՝ 13.42քմ մակերեսով մասը, որը ծառայում է որպես ննջարան և պատշգամբ, որի մուտքն առկա է միայն Արա և Դրաստամատ Օհանյաններին սեփականության իրավունքով պատկանող բնակարանից ներառված չէ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 23.05.2007թ.հ.2236141 վկայականում և հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.01072013-01-0217 վկայական)։

Համաձայն Կենտրոն վարչական շրջանի «Կենտրոն-1» համատիրության նախագահի կողմից 15.07.2013թ., 16.07.2013թ. և 23.07.2013թ. տրված տեղեկանքների՝ Բրյուսով փողոցի հ.23 շենքի հ.1 բնակարանում հաշվառված, փաստացի բնակվում է Արա Օհանյանի ընտանիքը և նշված 13.42քմ մակերեսով հատվածը փաստացի տնօրինվում և օգտագործվում է իր ընտանիքի կողմից։

Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի։

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի ք. Երևան, Բրյուսովի փողոցի հ.23 շենքի հ.1/1 հասցեում գտնվող գույքի անհատույց օտարման մասին որոշումը կարող է ընդունվել միայն Երևան քաղաքի ավագանու կողմից։

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակելի շինությունն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակելի շինությունն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ